

ՓԱՐՈՍ



Է-Լրատու
Մայիս 2023 - Թիւ 3
Հրատարակությունը Հ.Մ.Ը.Մ. Առնիեմ Մեկուսի Շրջանի Վարչություն

Ոգեկոչում Հայոց Ցեղասպանության Սրբացած նահատակներու

108-րդ ամենակի յիշատակը Առնիեմի մէջ :
Հովանաւորութեամբ , Արևմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ Գերաշնորհ Տէր Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի՝ Կազմակերպութեամբ , Առնիեմի Հայ Առաքելական եկեղեցւոյ , Նոր Այգ կիրակնօրեայ դպրոցի եւ Հ.Մ.Ը.Մ. Առնիեմ Մեկուսի Շրջանին . ապա Հ.Յ.Դ. Արամ Մանուկեան կոմիտէութեան , Հ.Յ.Դ. Գարեգին Նժդեհի , Հ.Օ.Ս.ի , Ալմէյօ-ի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ վարչութեան « ատենապետ Պր. Օ. Գելեջի»ի ներկայացուցիչներու , Առնիեմ տարածաշրջանի հայորդիներու եւ միութեանս քոյր/եղբայր-ներու ներկայութեամբ . Կիրակի 23 Ապրիլ 2023 Թ. Ժամը 15:00 ին Առնիեմի Եկեղեցւոյ մէջ , տեղի ունեցաւ Ապրիլեան 1915 Թ.ի ցեղասպանութեան Սրբացած նահատակներու յիշատակի ՀՈՒՇ ԵՐԵԿՈՅ :

Գերաշնորհ Արքեպիսկոպոս Պարսամեանի հոգեհանգստեան պաշտօնը , ցեղասպանութեան նահատակներու հոգիներուն մատուցանելով , սկիզբ առաւ օրուայ ձեռնարկի յայտագրին :

Ներկաները մէկ վայրկեան ոտնկայ լռութեամբ կանգնելէ ետք եւ միութեանս սկաւառները Հայաստանի Մեր Հայրենիք օրհներգը կատարելէ ետք օրուայ ձեռնարկի խօսնակը «Պր. Մկրտիչ Ամրօեան » բեմ հրաւիրեց միութեանս վարչութեան ներկայացուցիչ «Ատենապետ» , Եղբ. Բ.Փօլօեանին օրուայ հանդիսութեան բացման խօսքը կատարելու :

Աւարտին միութեանս սկաւառները ցուցադրեցին կենդանի պատկեր «Չենք մօրանալ , պահանջելու ենք եւ մի օր մենք տէրն դառնալու ենք մեր խլուած հողերուն» խորհրդանիշով: Ուր միութեանս սկաւառները զոյգ , զոյգ մուտք եկան սրահի կեդրոնը. մէտը կրած խլուած տարածաշրջաններու ցուց անուն իսկ միւսն ալ մոմ ի յարգանք նման տարածքի նահատակներուն հոգիներուն համար:





Կենդանի պատկերը իր հետաքրքիր խորհրդանշումով տպաուրիչ էլ յուզիչ էր ներկաներուն բայց մեր սկաուտներու հիանալի կատարումով ցեղասպանության ճանաչման , դատապարտման , արդարացի պահանջմունք էլ պայքարի ոգին ոգեկոչեցին էլ ներշնչեցին ներկաներուն:

Ետք , Պր. Ամրոտանը բեմ հրաւիրեց Առնհեմի Հ.Ա.Եկեղեցւոյ դպրաց դասին . որոնք գեղեցիկ կատարեցին «ԼԵԲԼԵԲԻՋԻ» երգը:

Օրուայ ձեռնարկին Առլեն Շահվերդեանը ներկայ էր. Ուր քոյր Գադի Մանասերեան էլ քոյր Նայիրի Ստեփանեան հրաշալի կատարումով արտասանեցին «Իմ հողն ուրիշ է » ասմունքը:

Առնհեմի Նոր Այգ կիրակնօրեայ դպրոցի սաները իրենց գեղեցիկ հայկական տարազներով կատարեցին շարք մը արտասանություններ էլ երգեր :

Առնհեմի Հ.Ա.Եկեղեցւոյ դպրաց դասը էս բեմ հանդիսացաւ «Արաքս իմ բախտի երագ» հրաշալի կատարումով:

Ներկայ էր նաեւ օրուայ հուշ երեկոյին Համօ Սահեանը . ուր Տիկ. Դավար Լազարեան արտասանեց «Ատում են՝ հին ես այնքան, որքան որ կրակն է հին » Հայ ժողովրդին ասմունքը:

Օրուայ ձեռնարկի յայտագրի աւարտման փակման խօսքը ուղղելէ առաջ , միութեանս սկաուտները կատարեցին « Ատանայի ողբը» երգը:

Փակման խօսքը յանձնարարուեցաւ օրուայ ձեռնարկի հովանաւոր Գերաշնորհ Արքեպիսկոպոս Պարսամեանին . ուր իր հայրապետական ուղղեցներ ուղղելով «*Վատահանայի է երբ նման երիտասարդությունս սիրուքի մէջ կգործէ ուրեմն պահանջատիրության պարագայի երջը շարունակելու է :*» Աւարտին իր շնորհակալութեան խօսքը ուղղեց ներկաներուն էլ կազմակերպիչ յանձնախումբին :

Երեկոյի աւարտին ներկաները խմբուեցան եկեղեցւոյ բակը «ուր միութեանս խմբապետական խազմի նախապէս պատրաստած էր » ցեղասպանության փոքր յուշահամալիրի շուրջ . ուր Սրբազան հօրը հետ աղօթելով էլ ծաղիկներով . իրենց վերջին յարգանքի տուրքը մատուցեցին օրուայ սրբացած նահատակներուն :



ՄԻՋԻՆՔ ԱՌՆՆՆԵՄԻ ՄԷՉ

Մեծ պահքի միջինքի ծես «արարողության ազգային բանաձև»-ի առթիվ , 19 Մարտ 2023 Թ.ին Հ.Մ.Ը.Մ. Առնիեմ Մեկուսի Ծրջանի օգտագործած մարզադաշտի սրահին մէջ , կազմակերպուեցաւ ընտանեկան հաւաքոյթ : Օրուայ հաւաքին միութեանս ընկերային յանձնախումբի կողմէ ներերուեցաւ պահքի նախատեսւածներ եւ ճաշ :

Բնական պիտի ըլլար օրուայ հաւաքին. միութեանս վարչութեան կողմէ կազմակերպուեցաւ ՊԻՆԿՕ-ի խաղեր:

Օրը աւարտուեցաւ մեծ գնահատելի ընտանեկան մթնոլորտով:



Հ.Մ.Ը.Մ. Առնիեմ Մեկուսի Ծրջանի անցայտ եւ Կամաւոր բանակ

Ընդհանրապէս կամաւոր բանակի միտքը ծնունդն արաւ 19-րդ դարու ժամանակաշրջաններուն , որուն նպատակն եղած էր օժանդակութիւն եւ աջակցութիւն ցուցաբերել երկրի մը պետական բանակին :

Այս ծրագրի գաղափարախօսութիւնը տարիներ շարունակ զարգացուեցաւ , կիրառուեցաւ , տարբեր կերպարանքներ ստացաւ եւ մուտք ստացաւ գործելու նոյնիսկ տարբեր կազմակերպական աշխատանքներուն մէջ:

Արդար արեւ կուգնմ ձեզ հետ կիսուելու միութեանս մէջ գործող անցայտ կամաւոր բանակ « միութեանս Ընկերային յանձնախումբ »ի գաղտնիքը:

Միութեանս 2015 Թ.էն հիմնադրութիւնէ սկսեալ , յանձնախումբը վարագորյներու ետեւէն , բացառիկ աշխատանքներ տարած է հերթական վարչութիւններու ծրագիրները « ըլլայ միութեանական , մարզական կամ սկստութեան » բարգաւաճ իրականացման եւ նպաստաւոր արդիւնքներ բերելու համար :

Ուստի հարկաւոր եւ անհրաժեշտ է նոյնիսկ մի յօրուածով պատուել եւ շնորհակալախօսքեր ուղղել յանձնախումբի անդամներուն եւ սպա ինչու ոչ ծանօթացնել հանրութեան մեր կամաւոր անցայտ բանակի անդամներուն : Կեցցէք եւ վարձքերնիդ կատար :

Հ.Մ.Ը.Մ. Առնիեմ Մեկուսի Ծրջանի Ընկերային յանձնախումբը կը բաղկանայ .-

Եղբ. Շանթ Պետրոսեան « Միութեանս վարչութեան ներկայացուցիչ»

Եղբ. Ռազմիկ Մանասէրեան « Յանձնախումբի պատասխանատու»

Քոյր Բիթա Ապանեան

Քոյր Լիզա Սարգիսեան

Քոյր Մարալ Պօղոսեան

Եղբ. Սարգիս Ապանեան

Քոյր Նինա Ապանեան

Եղբ. Ազատ Գրիգորեան

Եղբ. Իւսչիկ Պօղոսեան

Քոյր Աննա Մանուկեան

Քոյր Մարիամ Ապանեան



Միությանն սկսուտական խմբապետական կազմի հնարաւորութիւն ունեցաւ իր հերթական հաւաքոյթները կազմակերպելու:

2 Ապրիլ 2023 Թ.ին Միությանն օգտագործած մարզադաշտին մէջ հաւաքուեցան մօտ 25 սկսուտներ : Օրուայ հաւաքին սկսուտական դասընթացքները եւ խաղերը բարձր տրամադրութեամբ ներկայ էին :

Հակառակ Հոյանտայի սովորական եղանակին , մեր սկսուտները վայելեցին իրենց սնունդները հրաշալի արեւոտ եղանակով:

Օրուայ ներկայ սկսուտներու եւ իրենց ընտանիքները հանելի միությունական ընտանեկան օր անցկացուցին :



Միությանն սկսուտական խմբապետական կազմի կազմակերպութեամբ եւ 22 սկսուտներու մասնակցութեամբ , 1 Մայիս, 2023 Թ.-ին տեղի ունեցաւ արշաւ դէպի «Toverland » զուարճանքի խաղալիսր :

Օրուայ միջոցառման , խմբապետական կազմին օժանդակեցին մասնակից սկսուտներու ընտանիքի անդամներ եւ կամուրներ:

Հոյանտայի հիանալի եղանակին , Բոյոր ալ լաւ ժամանակ անցկացուցին խաղալիսրին մէջ:



Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Ծրջանի տարեկան 4-րդ բանակում



Հ.Մ.Ը.Մ. Առնհեմ Մեկուսի Ծրջանի Սկաուտական խմբապետական կազմի կազմակերպությամբ, Առնհեմ քաղաքի մէջ (De Pas) բանակավայրին մէջ, Հայ Սկաուտի օրուայ նուիրուած, 25-26 Փետրուար 2023 Թ.ին տեղի ունեցաւ միութեանս տարեկան 4-րդ բանակումը:

Բանակումին սկաուտական խմբապետական կազմը կազմուած էր, քոյր Նայիրի Ալանեան « Բանակավայրի ընդհանուր խմբապետուհի, քոյր Նօժնի Ազիզեան - Իշխանեան, քոյր Թամար Պօղոսեան - Ստեփանեան եւ քոյր Սիրուա Սարգիսեան » -ներէն: Խմբ.ական կազմը նախապէս պատրաստած էր բանակումի մասնակիցներուն հետաքրքիր յայտագիր. ուր բանակումի մասնակիցներու ընդելութիւնը տեղի ունեցաւ Ծարաթ Փետրուար 25-ին ժամը 12 –ին:

Օրուայ բանակումին մասնակցողներու թիւը « 25 սկաուտներ» լրացուելէ ետք, տեղի ունեցաւ դրօշակի բարձրացման արարողութիւն. որուն աւարտին տեղի ունեցաւ փողկապներու փոխանցման արարողութիւններ:

Արարողութիւններու եւ փոքր դադարէն ետք, տեղի ունեցաւ խմբակներու բաժանումներ եւ ապա սկսուեցան սկաուտական դասընթացքներու շարքերը. ուր պատասխանատուները փոխանցեցին ներկայ սկաուտներուն Մոկիլիկի պատմութիւնը, բանակավայրի օրէնքներու, սկաուտական կապերու, հայոց պատմութեան եւ կրօնքի գիտելիքներ:

Դասընթացքներու աւարտին տեղի ունեցաւ ընդմիջում ճաշի պատճառով « որն պատրաստուեցաւ ներկաներու կողմէ»:

Դադարէն վերջ, բանակումին մասնակցող սկաուտները փոխանցեցին իրենց ստացուած տեսլական գիտելիքները գործնականի եւ հարց - պատասխանի: սկաուտական խաղերու, կոչերու եւ երգ ու պարն ալ ներկայ էին բանակումին:


Գործնական շրջանը աւարտին Եդր. Մինաս Արսենեան դասախօսեց ներկաներուն « Սկաուտ եւ առողջապահութիւն » նիւթը:

Բանակումի առաջին օրը աւարտուեցաւ խարուկահանդէտով, ընթրիքով եւ գիշերային պահակութեան ցուցակը պատրաստելով:

Բանակավայրի ընդհանուր խմբապետուհի սուլոցով, սկիզբ արաւ բանակումին երկրորդ օրը. Բանակավայրի մասնակիցները, բանակավայրի դաշտին մէջ համախմբուելէ ետք սկիզբ արաւ մարզանքով, աշխուժանալով ապա պատրաստուելով նոր օրուայ: Աւարտին նախաճաշելէ ետք մասնակիցները զբաղուեցան սկաուտական խաղերով:

Բանակումը աւարտուեցաւ դրօշակի ներ բերումով:

Օրուայ աւարտին միութեանս ընկերային յանձնախումբը պատրաստած էր, բանակումին մասնակցողներուն, իրենց ընտանիքներուն եւ հիւրերուն Իրաքի հանրաճանաչ ճաշ « Թէշրիպ Պակլլա »:



-Ձեր առաջարկներով միութիւնս զարգացնելու ենք: Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատուել «Office.arnhem@homenetmen.org» - ով:

-Լրացուցիչ լուսանկարներ դիտելու համար կիսնդրէնք այցելել Հ Մ Ը Մ Առնհեմ Homenetmen Arnhem կայքէջը: